



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2008թ. նոյեմբերին /վերլուծություն/

2008թ. նոյեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 12576 գործարքներ, որոնց քանակը 2007թ. նոյեմբերի համեմատ նվազել է 16.0%-ով, իսկ 2008թ. հոկտեմբերի համեմատ՝ 13.6%-ով:

2008թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3729 օտարման գործարքների 78.3%-ը կազմել են առուվաճառքները, 20.1%-ը՝ նվիրատվությունները և 1.6%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 32.7%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 34.4%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2008թ. նոյեմբերին, 2008թ. հոկտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 25.9%-ով, իսկ 2007թ. նոյեմբերի համեմատ՝ 35.8%-ով:

2008թ. նոյեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 60.3%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2008թ. հոկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 27.8%-ով, իսկ 2007թ. նոյեմբերի համեմատ՝ 43.7%-ով:

2008թ. նոյեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	նոյեմբեր 2007թ.	նոյեմբեր 2008թ.	հոկտեմբեր 2008թ.
Կենտրոն	473100	495400	490000
Արաբկիր	377500	400400	401700
Քանաքեռ-Զեյթուն	295000	310000	313200
Նոր-Նորք	251300	269100	272600
Ավան	250800	276900	276800
Էրեբունի	250500	271600	267000
Շենգավիթ	261700	278300	283700
Դավթաշեն	274600	299300	304900
Աջափնյակ	257100	265500	269800
Մալաթիա-Մեքաստիա	250000	259000	255000
Նուբարաշեն	137500	167900	165600
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	279900	299400	300000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. նոյեմբերին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. հոկտեմբերի համեմատ մնացել են հիմնականում անփոփոխ:

2008թ. նոյեմբերին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 384 բնակարաններ, որոնց քանակը 2008թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 9.9%-ով, իսկ 2007թ. նոյեմբերի համեմատ՝ 27.0%-ով:

2008թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		նոյեմբեր 2007թ.	նոյեմբեր 2008թ.	հոկտեմբեր 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	111200	140400	140300
	Ապարան	30800	37000	36400
	Թալին	40300	48200	47100
Արարատ	Արտաշատ	89900	107900	107800
	Մասիս	112400	140400	138000
	Վեդի	71300	84800	83300

	Արարատ	57900	72300	69500
Արմավիր	Վաղարշապատ	142900	178700	178600
	Արմավիր	108700	129000	128900
	Մեծամոր	66300	91600	89300
Գեղարքունիք	Սևան	73300	106100	102500
	Գավառ	39400	51800	51800
	Մարտունի	59000	73300	71200
	Վարդենիս	28300	33400	33000
	Ճամբարակ	15500	16700	16500
Լոռի	Վանաձոր	77800	102900	102400
	Ստեփանավան	42000	49400	48800
	Մայիտակ	55000	62800	62800
	Ալավերդի	27600	32700	32700
	Տաշիր	28900	33500	33500
	Թումանյան	5500	5600	5600
	Շամլուղ	3200	3200	3200
	Ախթալա	12600	13000	13000
Կոտայք	Աբովյան	151600	177500	177400
	Նոր Հաճն	111800	142100	138100
	Բյուրեղավան	82200	121600	117700
	Եղվարդ	105700	127600	127400
	Հրազդան	58000	76900	75300
	Ծաղկաձոր	110000	172500	165000
	Զարենցավան	71800	98500	98200
Շիրակ	Գյումրի	81800	122500	118200
	Արթիկ	48600	61100	59400
	Մարալիկ	25800	29400	29000
Սյունիք	Գորիս	82500	114600	114600
	Կապան	72600	108200	103500
	Միսիան	57900	87400	84600
	Մեղրի	42800	49200	49200
	Ագարակ	27500	30300	30300
	Քաջարան	39000	53600	53500
	Դաստակերտ	7000	7000	7000
Վայոց Ձոր	Վայք	69200	83800	83800
	Եղեգնաձոր	87300	106400	106400
	Զերմուկ	114900	145300	140600
Տավուշ	Դիլիջան	75900	106000	106000
	Իջևան	101900	146700	141500
	Բերդ	36200	40600	40600
	Նոյեմբերյան	29000	31200	31200
	Այրում	21000	21100	21100

2008թ. նոյեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. հոկտեմբերի համեմատ մնացել են հիմնականում անփոփոխ:

2008թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 391 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 78, մյուս մարզերում միասին վերցրած՝ 313: 2008թ. հոկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է՝ 21.0%-ով, ընդ որում Երևանում՝ 11.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 23.1%-ով: 2007թ. նոյեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների

քանակը նվազել է 41.0%-ով, ընդ որում Երևանում՝ 53.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 37.0%-ով:

2008թ. նոյեմբերին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	նոյեմբեր 2007թ.	նոյեմբեր 2008թ.	հոկտեմբեր 2008թ.
Կենտրոն	476700	510000	508500
Արաբկիր	391000	438400	438200
Քանաքեռ Զեյթուն	297500	325700	324700
Նորք Մարաշ	248100	313700	310400
Ավան	254000	291000	289800
Էրեբունի	252900	291000	290000
Շենգավիթ	264400	293800	292800
Դավթաշեն	279100	324500	324500
Աջափնյակ	262100	302200	300900
Մալաթիա-Սեբաստիա	254600	295300	294200
Նուբարաշեն	138700	172300	168300
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	283600	323400	322000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. նոյեմբերին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. հոկտեմբերի համեմատ մնացել են հիմնականում անփոփոխ:

2008թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		նոյեմբեր 2007թ.	նոյեմբեր 2008թ.	հոկտեմբեր 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	116300	144800	144800
	Ապարան	33700	38900	38800
	Թալին	43100	48800	48500
Արարատ	Արտաշատ	95600	112300	112100
	Մասիս	115000	141500	139200
	Վեդի	73000	91600	91600
	Արարատ	63100	73000	70700
Արմավիր	Վաղարշապատ	145100	180500	179700
	Արմավիր	110800	132500	132500
Գեղարքունիք	Սևան	74800	107300	106000
	Գավառ	40900	55400	54400
	Մարտունի	60600	77600	77200
	Վարդենիս	30800	37100	36900

	Ճամբարակ	18800	21200	21100
Լոռի	Վանաձոր	84500	110000	109400
	Ստեփանավան	46400	53800	53500
	Սպիտակ	56900	67600	67500
	Ալավերդի	30200	37300	37200
	Տաշիր	30200	37900	37700
	Թումանյան	8700	10400	10400
	Շամլուղ	5800	7400	7400
	Ախթալա	15100	16200	16200
Կոտայք	Աբովյան	158700	192100	191600
	Նոր Հաճն	116600	143800	142300
	Բյուրեղավան	83700	122700	119700
	Եղվարդ	108100	133500	133500
	Հրազդան	61300	81000	79500
	Ծաղկաձոր	171700	271300	267300
	Չարենցավան	73500	100500	100200
Շիրակ	Գյումրի	87200	124300	120300
	Արթիկ	51000	63700	63300
	Մարալիկ	29000	32700	32700
Սյունիք	Գորիս	84600	126600	125400
	Կապան	76300	109400	105800
	Սիսիան	60700	88600	85900
	Մեղրի	45100	51700	51400
	Ագարակ	28800	33300	33300
	Դաստակերտ	9800	10400	10400
Վայոց Ձոր	Վայք	70600	87300	85700
	Եղեգնաձոր	89700	111100	108900
	Ջերմուկ	64000	100200	98400
Տավուշ	Դիլիջան	80800	119200	119200
	Իջևան	103900	147700	143200
	Բերդ	38900	42500	42300
	Նոյեմբերյան	34600	36600	36400
	Այրում	22800	23000	23000

2008թ. նոյեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. հոկտեմբերի համեմատ մնացել են հիմնականում անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2008թ. նոյեմբերին հանրապետությունում օտարվել են 1404 միավոր /842.16 հա/ հողեր, որից Երևանում` 79 միավոր /12.94 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 25 միավոր /4.43 հա/ հողեր, որից Երևանում` 15 միավոր /0.69 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 610 միավոր /748.02 հա/, որից Երևանում` 1 միավոր /0.14 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 573 միավոր /48.65 հա/, որից Երևանում` 51 միավոր /3.71 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 198 միավոր /36.38 հա/, որից Երևանում` 24 միավոր /7.95 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 10 միավոր /6.59 հա/, որից Երևանում` 3 միավոր /1.14 հա/,

- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 12 միավոր /2.21 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 1 միավոր /0.30 հա/

2008թ. նոյեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1276 միավորի /786.25 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 68 միավոր /8.79 հա/, նվիրատվության գործարքներ՝ 116 միավորի /35.99 հա/, որից Երևանում՝ 8 միավոր /0.28 հա/ և փոխանակության գործարքներ՝ 12 միավորի /19.92 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /3.87 հա/:

Հանրապետությունում 2008թ. նոյեմբերին, 2007թ. նոյեմբերի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 44.1%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 42.5%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել՝ 44.8%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել՝ 65.5%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 267.91 հա, որից 259.86 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 32.8%-ը կամ 417 գործարքներ /149.47 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 20 գործարքներ /3.96 հա/, իսկ 66.5%-ը կամ 850 միավորը /636.70 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 47 միավոր /4.83 հա/:

2008թ. նոյեմբերին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 9 գործարք /0.08 հա/:

Ստորև ներկայացվում է 2008թ. նոյեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	2	0.60	7	0.85	11	2.50	1	0.14	1	0.54	37	2.58	8	1.58
Արագածոտն	7	4.91	0	0.00	1	0.02	5	0.15	56	46.29	0	0.00	35	3.89	6	20.16
Արարատ	5	13.32	0	0.00	6	1.47	7	0.26	69	30.51	0	0.00	58	5.18	6	0.14
Արմավիր	11	37.95	0	0.00	4	0.23	17	0.42	102	221.91	1	0.06	69	6.69	5	0.66
Գեղարքունիք	10	21.35	0	0.00	63	3.72	19	1.46	16	29.50	0	0.00	20	2.71	2	0.05
Լոռի	1	0.55	0	0.00	9	0.42	18	0.92	35	129.27	1	4.00	5	0.54	1	0.01
Կոտայք	22	35.47	1	0.19	41	3.73	19	1.03	123	61.77	0	0.00	85	8.01	9	0.74
Շիրակ	0	0.00	3	0.35	35	1.02	23	0.51	25	21.07	0	0.00	7	0.60	2	0.02
Սյունիք	0	0.00	1	0.85	4	0.15	4	0.71	12	18.26	0	0.00	0	0.00	0	0.00
Վայոց Ձոր	11	10.10	0	0.00	17	1.15	9	0.06	2	1.06	0	0.00	5	0.49	0	0.00
Տավուշ	2	1.70	0	0.00	8	0.66	11	0.41	32	15.50	0	0.00	5	0.21	1	0.47
Ընդամենը	69	125.35	7	1.99	195	13.42	143	8.43	473	575.28	3	4.60	326	30.90	40	23.83

Ստորև ներկայացվում է 2008թ. նոյեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	13	2.51	2	0.60	2	0.09	9	1.82	7	1.44	0	0.00	0	0.00	5	0.76	2	0.68
Արագածոտն	2	0.023	0	0.00	1	0.02	1	0.003	11	5.05	7	4.90	0	0.00	0	0.00	4	0.15
Արարատ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	18	15.05	5	13.32	0	0.00	6	1.47	7	0.26
Արմավիր	6	0.06	0	0.00	0	0.00	6	0.06	26	38.54	11	37.95	0	0.00	4	0.23	11	0.36
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	92	26.53	10	21.35	0	0.00	63	3.72	19	1.46
Լոռի	8	0.18	0	0.00	3	0.11	5	0.07	20	1.70	1	0.55	0	0.00	6	0.31	13	0.84
Կոտայք	8	0.49	1	0.19	0	0.00	7	0.30	72	39.20	19	34.75	0	0.00	41	3.73	12	0.72
Շիրակ	11	0.39	1	0.11	6	0.24	4	0.04	50	1.49	0	0.00	2	0.24	29	0.78	19	0.47
Սյունիք	3	0.86	1	0.85	0	0.00	2	0.01	6	0.85	0	0.00	0	0.00	4	0.15	2	0.70
Վայոց Ձոր	3	0.03	0	0.00	0	0.00	3	0.03	34	11.28	11	10.10	0	0.00	17	1.15	6	0.03
Տավուշ	6	0.29	0	0.00	4	0.23	2	0.06	15	2.47	2	1.70	0	0.00	4	0.42	9	0.35
Ընդամենը	60	4.83	5	1.75	16	0.69	39	2.39	351	143.60	66	124.62	2	0.24	179	12.72	104	6.02

Հանրապետությունում 2008թ. նոյեմբերին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 3 գործարք /0.72 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2008թ. նոյեմբերին, 2007թ. նոյեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 49.4%-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 82.1%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 47.5%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 72.8%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել՝ 3.2%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել՝ 57.2%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել՝ 90.5%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. նոյեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	5	3.68	35.2	323.5	147.0	42	31.38	365.0	12000.0	3825.5

Ապարան						3	1.68	86.5	2727.3	483.0
Թալին	2	1.23	80.0	597.1	338.5	9	8.78	93.6	5494.5	496.5
Ծաղկահովիտ						2	4.45	79.5	1000.0	211.7
Արարատի մարզ										
Արտաշատ	1	0.78	3064.4	3064.4	3064.4	26	8.99	335.1	10833.3	1932.2
Մասիս	3	12.14	252.0	273.6	259.5	12	6.09	200.0	11904.8	2575.8
Վեդի	1	0.40	372.5	372.5	372.5	28	14.68	207.0	10795.1	1735.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	0.50	63.5	63.5	63.5	51	49.00	294.3	9090.0	1135.4
Բաղրամյան	5	35.22	35.5	38.6	36.1	13	120.54	90.6	2561.1	660.9
Վաղարշապատ	5	2.23	58.5	525.0	268.9	37	51.42	444.4	11764.7	2269.4
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						2	1.99	199.8	1875.0	438.8
Ճամբարակ						3	0.30	60.5	953.3	201.5
Մարտունի								51.1	2850.0	525.8
Սևան								52.2	2134.8	212.5
Վարդենիս	10	21.35	175.5	362.5	221.3	11	27.21	41.2	2575.1	330.8
Լոռու մարզ										
Ալավերդի	1	0.55	364.9	364.9	364.9	4	2.24	170.4	6424.2	1124.0
Գուգարք						6	1.57	234.6	6065.9	1030.5
Սպիտակ								250.0	5555.5	568.5
Ստեփանավան						3	2.83	90.6	1686.6	410.0
Տաշիր						22	122.63	45.3	1384.4	218.2
Կոտայքի մարզ										
Աբովյան	8	20.94	204.2	785.9	430.3	58	19.13	279.3	11942.7	4555.5
Եղվարդ	7	6.93	50.3	2450.0	691.5	43	24.83	174.4	11971.8	3185.5
Հրազդան	4	6.88	147.3	926.5	535.0	19	17.25	130.5	10256.4	1305.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						5	8.23	252.0	1693.1	485.5
Ամասիա						1	2.55	40.9	261.0	127.8
Անի						8	6.58	110.6	546.9	287.8
Աշոցք						8	2.54	58.5	215.8	120.3
Արթիկ						3	1.17	79.4	1428.6	195.5
Սյունիքի մարզ										
Գորիս						4	8.78	92.6	1023.2	414.5
Կապան						6	6.20	120.0	841.6	258.8
Մեղրի								193.0	3000.0	554.8
Սիսիան						2	3.29	46.3	1977.4	278.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	10	8.60	37.1	572.5	236.6	2	1.06	125.0	10000.0	1400.6
Վայք	1	1.50	42.7	42.7	42.7			58.8	1430.7	526.2
Տավուշի մարզ										
Բերդ						2	1.13	213.3	3783.8	425.8
Իջևան	2	1.70	90.0	498.3	294.2			267.5	9454.5	928.5
Նոյեմբերյան						30	14.37	46.7	7368.4	668.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. նոյեմբերին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						29	27336.0	130.7	22200.0	2574.0
Ապարան						2	3760.0	124.1	609.6	228.2
Թալին						3	4685.0	63.2	1454.8	118.2
Ծաղկահովիտ						1	3160.0	60.0	214.3	75.1
Արարատի մարզ										
Արտաշատ	4	4526.0	385.5	537.7	499.2	16	17176.0	173.9	7140.3	927.0
Մասիս	2	10190.0	579.3	580.8	580.1	27	19580.0	187.5	25000.0	1219.5
Վեդի						13	13349.0	126.1	5000.0	680.4
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	800.0	652.0	652.0	652.0	34	37109.0	131.6	9090.9	1220.0
Բաղրամյան								100.0	833.3	158.5
Վաղարշապատ	3	1500.0	3828.0	3828.0	3828.0	35	29755.0	197.4	26528.4	1556.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						5	4500.0	186.6	1084.3	408.1
Ճամբարակ						2	1290.0	71.3	2286.2	112.2
Մարտունի	40	16702.0	112.9	119.6	115.3	11	16604.0	119.3	5000.0	272.6
Սևան	23	20493.0	188.1	690.6	413.6			240.0	3110.4	185.5
Վարդենիս						2	4700.0	72.5	987.2	138.2
Լոռու մարզ										
Ալավերդի						1	130.0	114.3	1388.9	156.2
Գուգարք	5	1919.0	749.0	4750.0	2325.5			77.9	14083.3	628.7
Սյիտակ						1	1300.0	104.9	1348.3	155.1
Ստեփանավան	1	1200.0	277.2	277.2	277.2	1	1310.0	88.2	1666.7	123.2
Տաշիր						2	2630.0	45.3	400.0	74.3
Կոտայքի մարզ										
Աբովյան	35	31333.6	410.0	4966.5	659.4	44	42441.0	264.5	35353.5	2089.6
Եղվարդ	6	5960.0	1617.0	2375.1	1743.4	37	34508.0	173.6	27000.0	2388.5
Հրազդան						4	3190.0	117.7	34848.5	1354.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	24	5579.7	1250.0	4069.8	2413.4	4	3251.0	113.6	18750.0	335.1
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	2	800.0	337.5	362.5	350.0	1	979.0	67.9	180.6	102.8
Աշոցք								40.8	144.0	58.1
Արթիկ	3	1400.0	286.8	429.8	382.1	2	1800.0	111.8	5000.0	204.2
Սյունիքի մարզ										
Գորիս								112.2	1700.0	264.7
Կապան								67.9	2638.9	218.8
Մեղրի								68.5	632.9	134.1
Սիսիան	4	1500.0	581.0	608.0	601.3			123.5	875.0	154.4
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	400.0	757.5	757.5	757.5	4	3690.0	96.7	7659.6	342.2
Վայք	16	11144.6	854.0	1324.4	914.0			120.7	1448.3	129.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	91.5
Իջևան	4	4215.0	79.2	297.0	174.9	3	1067.0	74.1	14423.1	478.2
Նոյեմբերյան						2	1080.0	125.0	1948.1	153.5

2008թ. նոյեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 27 գործարքներ 4.47 հա մակերեսով, ընդ որում 5-ը՝ /0.80 հա/ Արարատի և 22-ը՝ /3.67 հա/ Լոռու մարզերում:

2008թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 960 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.6%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 75.5%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2008թ. նոյեմբերին 2008թ. հոկտեմբերի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 16.5%-ով, իսկ 2007թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 0.4%-ով:

2008թ. նոյեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 48 բնակարանների, 33 անհատական բնակելի տների, 374 հասարակական, 59 արտադրական նշանակության օբյեկտների, 415 միավոր /1421.51 հա/ հողերի 31 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2008թ. նոյեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 23 վարձակալության գործարքների /այդ թվում 9 միավոր /0.04 հա/ կառուցապատման իրավունքով/ քանակը 2008թ. հոկտեմբերի համեմատ աճել է 27.8%-ով, իսկ 2007թ. նոյեմբերի համեմատ նվազել՝ 68.9%-ով: 2008թ. նոյեմբերին հանրապետությունում վարձակալված 1421.51 հա հողերից 2.29 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1419.22 հա հողերի 1.60 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 628.71 հա, որից 628.42 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 271.00 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2008թ. նոյեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	1	158.00	6	28.97
Արարատ	0	0.00	4	7.50
Արմավիր	0	0.00	1	3.00
Գեղարքունիք	0	0.00	18	39.40
Լոռի	0	0.00	36	238.25
Կոտայք	0	0.00	11	19.78
Շիրակ	3	113.00	62	131.28
Սյունիք	0	0.00	22	628.42
Վայոց Ձոր	0	0.00	12	12.89
Տավուշ	0	0.00	3	27.50
Ընդամենը	4	271.00	175	1136.99

2008թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1571 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.5%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 30.5%-ով, իսկ 2007թ. նոյեմբերի համեմատ՝ 30.1%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /47.4%/, առանձնատների /24.7%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.2%/ և հողերի /13.6%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 586 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 32.2%-ով, իսկ 2007թ. նոյեմբերի համեմատ՝ 37.1%-ով: 2008թ. նոյեմբերին հանրապետությունում գրավադրվել են 311.27 հա հողեր, որից 3.03 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 97.7%-ը կամ 304.26 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 196.37 հա, որից 196.33 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2008թ. նոյեմբերին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 82 գործարքներ, որից 62-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 74.4%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 17.1%-ն՝ անհատական բնակելի տների, 2.4%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 4.9%-ն՝ արտադրական նշանակության օբյեկտների և 1.2%-ն՝ այգետնակների նկատմամբ: 2008թ. հոկտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 40.1 %-ով, ընդ որում Երևանում՝ 32.6%-ով, իսկ մարզերում՝ 55.6%-ով:

2008թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 5 և 1 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: Մասնավորեցման գործարքների քանակը 2008թ. հոկտեմբերի համեմատ աճել է 20.0%-ով, իսկ 2007թ. նոյեմբերի համեմատ նվազել՝ 40.0%-ով: 2008թ. նոյեմբերին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են. 3-ը՝ Երևանում, 1-ական՝ Արարատի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում:

2008թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2104 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2008թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 23.1%-ով, իսկ 2007թ. նոյեմբերի համեմատ՝ 15.8%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.7%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /24.3%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն